



**Յու. Հովհաննիսյանի անվան
Արվեստի և գրականության ժողովրդական համալսարան**

ՀՀ Արմավիրի մարզպետ՝ պարոն Դավիթ Խուդաբայանին

Հարգելի պարոն մարզպետ

Յու. Հովհաննիսյանի անվ. արվեստի և գրականության ժողովրդական համալսարանն իր 50-ամյակի առթիվ նախաձեռնում է «Կոմիտասյան Հայաստան» խորագրով ֆլեշմոբ՝ նվիրված Կոմիտաս Վարդապետի ծննդյան 155-ամյակին:

Ֆլեշմոբի միջոցով յուրաքանչյուր մասնակից հնարավորություն կունենա իր խոսքը ասել որպես հայ մշակույթը կրող և տարածող հասարակության գործուն անդամ:

Միջոցառման տևողությունը՝ Նավասարդից (2024 թվականի օգոստոսի 11) մինչ Կոմիտաս Վարդապետի ծննդյան օրը (սեպտեմբերի 26):

Միջոցառման ձևաչափը՝ յուրաքանչյուր մասնակից \$Բ-ի իր հարթակում live-ի կամ նախօրոք պատրաստած տեսահոլովակի ձևաչափով տեղադրում է Կոմիտաս Վարդապետին վերաբերող նյութ՝ նկար, քանդակ կամ հանդես է գալիս երգով, բանաստեղծությամբ, ասույթով, հուշերով:

Մասնակիցը ներկայանում և հայտարարում է, որ միանում է «Կոմիտասյան Հայաստան» ֆլեշմոբին, հանդես է գալիս իր խոսքով, կատարումով, մարտահրավեր նետելով հաջորդ մասնակցին:

Խնդրում ենք մարզի հանրությանը (մշակութային կազմակերպություններ, դպրոցներ) իրազեկել միջոցառման մասին, ինչը կօգնի համայն հայությանը ներկացնել մարզի գրավչությունը մեկ այլ ձևաչափով: Մեկ ակնթարթ միավորվենք Մեծն Կոմիտասի հոգևոր լույսի շուրջը, մեր խոնարհումը բերենք ու դառնանք Վարդապետի ժառանգության իրավատերը:

Հարգանքով՝ Անահիտ Օհանյան
091-244-267
ռեկտոր

#ԿոմիտասյանՀայաստան
#Կոմիտաս155



**Հայրենի երգն ես դու մեր՝
Վերադարձած հայրենիք...
Ե.Չարենց**